ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ
Էդվարդ Հովհաննիսյանի մոտ 2022 թվականի մարտի 9-ին կայացած
խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ *Առնակ Ավետիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ *Արամ Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Գյուղատնտեսության և բնապահպանության *Արթուր Այվազյանի*
վարչության պետ՝
ՀՀ Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման
և հանրապետական գործադիրի մարմինների
հարցերով վարչության պետ՝ *Գոռ Հովհաննիսյանի*
Արմավիր համայնքի ղեկավար՝ *Դավիթ Խուդաթյանի*
Մեծամոր համայնքի ղեկավար՝ *Վահրամ Խաչատրյանի*
Էջմիածին համայնքի ղեկավար՝ *Դիաննա Գասպարյանի*
Խոյ համայնքի ղեկավար՝ *Արգիշտի Մեխակյանի*
Արաքս համայնքի ղեկավար՝ *Ղազար Ղազարյանի*
Փարաքար համայնքի ղեկավար՝ *Դավիթ Մինասյանի*
Բաղրամյան համայնքի ղեկավար՝ *Շանթ Առաքելյանի*
Ֆերիկ համայնքի ղեկավար՝ *Ռուստամ Հասանյանի*
Արմավիր ՋՕԸ-ի տնօրեն՝ *Վահագ Արշակյանի*
Էջմիածին ՋՕԸ-տնօրեն՝ *Բագրատ Հովհաննիսյանի*
Շենիկ ՋՕԸ-ի տնօրեն՝ *Սամվել Սարգսյանի*

Ողջունելով ներկաներին ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը խորհրդակցության մասնակիցներին ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետի նորանշանակ տեղակալ Առնակ Ավետիսյանին:

Օրակարգում

Հարց 1 Հայաստանի Հանրապետության ՀՀ Արմավիրի մարզի հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման և տրամադրման գործընթացի վերաբերյալ, կապված 03.03.2022թ ՀՀ կառավարության N 281-լ որոշման հետ:

/ՀՀ Արմավիրի մարզպետ- Էդվարդ Հովհաննիսյան/

Հարց 2 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի իրականացման վերաբերյալ:

/ՀՀ Արմավիրի մարզպետ- էդվարդ Հովհաննիսյան/

Հարց 3 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/ՀՀ Արմավիրի մարզպետ-Էդվարդ Հովհաննիսյան/

Հարց 4 «Հայրենականչ» մարզային թերթի բաժանորդագրմանը աջակցելու վերաբերյալ:

/ՀՀ Արմավիրի մարզպետ-էդվարդ Հովհաննիսյան/

Հարց 1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ, կապված ՀՀ կառավարության 03.03.2022թվականի N 281-L որոշման հետ:

Օրակարգային հարցի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցության մասնակիցներին տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 3.03. 2022 թվականի N281-լ որոշմամբ մարզի հողօգտագործողներին մատչելի գներով տրամադրվելու է ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, ուստի խորհրդակցության նպատակն է քննարկել և վեր հանել բոլոր հնարավոր ռիսկերն ու խոչընդոտները, որոնք կարող են առաջանալ այդ գործընթացում: Նա նշեց, որ ծրագիրը մինչ կազմվելը, բազմիցս քննարկվել է մի շարք շահագրգիռ գերատեսչությունների հետ, հնարավորինս շտկվել և պարզեցվել է, որպեսզի ռիսկերը հասցվեն նվազագույնի: Սակայն ցանկալի է մեկ անգամ ևս նախապես միասին քննարկել և վեր հանել այն բոլոր հիմնախնդիրներն ու խոչընդոտները, դրանք հնարավորինս չեզոքացնելու համար, ընգծելով, որ ծրագրի լիարժեք և անաչառ իրականացման համար պատասխանատու են ՀՀ Արմավիրի մարզպետարանը և համայնքների ղեկավարները, հատկապես որ այս գործընթացի համար չկա հստակ մոդել, ուստի պետք է աշխատանքները իրականացվեն առավել քան պատասխանատու ձևով:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը ներկայացրեց ծրագրի իրականացման կարգին վերաբերող մանրամասները՝ առանձնակի շեշտելով դրա իրականացման ժամկետների կարևորությունը:

Քննարկման ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարները և ՋՕԸ-ների տնօրեններն անդրադարձան առավել անհանգստացնող խնդիրներին, որոնք վերաբերում էին Վիճակագրական վարչության կողմից ներկայացված և փաստացի մշակվող հողատարածքների չափերի իրական և ոչ իրական թվերին, մատակարարների կողմից առաջարկվող գնային տարբերության և հնարավոր փոփոխություններին և գործընթացին առնչվող մի շարք հայլ հարցերին:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ամփոփելով խորհրդակցությանը մասնակից համայնքների ղեկավարների և մարզի ՋՕԸ-ների տնօրենների կողմից բարձրացված հիմնախնդիրները, ***առաջարկեց՝***

ՀՀ Արմավիրի մարզի ՋՕԸ-ների տնօրեններին՝

Համայնքների ղեկավարների հետ իրականացնել համագործակցված աշխատանք, որի արդյունքում ամփոփ տեղեկատվությունը ներկայացնել համապատասխան համայնքների ղեկավարներին:

ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝

ՋՕԸ–ների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա իրականացնել գործնական աշխատանքներ հողօգտագործողներին տրամադրվելիք պարարտանյութերի ձեռքբերման և բաշխման արդյունավետ աշխատանքները կազմակերպելու նպատակով, ինչպես նաև խիստ վերահսկողություն սահմանել վարչական տարածքների ղեկավարների կողմից իրականացվող աշխատանքներին՝ անաչառ և լիարժեք արդյունքներ ստանալու համար, ազգաբնակչության շրջանում իրականացնել այս գորրծընթացին լիարժեք տեղեկացման աշխատանքներ՝ բոլոր հնարավոր միջոցներով:

Հարց 2. Արմավիրի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ:

Օրակարգային հարցի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ կան որոշակի խնդիրներ և անհանգստություններ կապված դրանց ժամկետների, աշխատանքների ընթացքի, հայտարարվող մրցույթների, թերի կատարված աշխատանքների ժամկետների և տեղափոխված ծրագրերի վերաբերյալ: Նա ընդգծեց, որ պետք է ամենայն պատասխանատվությամբ մոտենալ այս գործընթացին, գտնել ամենաչնչին թերությունները, շտկել, կարգավորել և սահմանված ժամկետներում հասցնել ավարտին, որպեսզի ապահովվի լիարժեք արդյունք:

Առաջարկեց՝

ՀՀ Արմավիրի մարզի համայնքերի ղեկավարներին՝

Գույքագրել և վեր հանել բոլոր խնդիրները կապված սուբվենցիոն ծրագրերի իրականացման գործընթացի հետ և համապատասխան գրություններով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարան՝ դրանք ըստ առաջնահերթության և անհրաժեշտության ՀՀ կառավարություն և պատկան մարմիններին ներկայացնելու նպատակով՝ համապատասխան ընթացք տալու համար:

Հարց 3. ՀՀ Արմավիրի մարզում ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ

Առաջարկեց՝

ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին և ՋՕԸ-ների տնօրեններին՝

Համատեղ և միասնական ջանքերով իրականացնել ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքները՝ ոռոգման համակարգի արդյունավետ շահագործման համար:

Հարց 4. «Հայրենականչ» մարզային թերթի բաժանորդագրմանը աջակցելու համար:

Առաջարկեց՝

ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝

Ընդառաջել և հնարավորինս աջակցել «Հայրենականչ» մարզային թերթի բաժանորդագրման գործընթացին:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտին ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար Ա.Հովհաննիսյանն առաջարկեց համայնքների ղեկավարներին մշտական վերահսկողության տակ պահել իրենց համայնքների աշխատակազմերում փաստաթղթաշրջանառության իրականացման գործընթացը:
Օրակարգային հարցերի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ հովհաննիսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

X _____

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան